



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. փետրվարին /վերլուծություն/

2010թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13417 գործարքներ, որոնց քանակը 2009թ. փետրվարի համեմատ աճել է 30.4%-ով, իսկ 2010թ. հունվարի համեմատ՝ 65.0%-ով:

2010թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3319 օտարման գործարքների 79.6%-ը կազմել են առուվաճառքները, 19.2%-ը՝ նվիրատվությունները և 1.2-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. փետրվարին, 2010թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 36.2%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 20.6%-ով:

2010թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 67.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. փետրվարին, 2010թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 58.0%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 44.3%-ով:

2010թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2009թ.	փետրվար 2010թ.	հունվար 2010թ.
Կենտրոն	482300	469200	473300
Արաբկիր	344400	370800	370800
Քանաքեռ-Զեյթուն	270200	281200	283300
Նոր-Նորք	241200	234400	232400
Ավան	241800	235700	232800
Էրեբունի	256600	246500	246200
Շենգավիթ	237300	247300	247700
Դավթաշեն	268400	269000	267800
Աջափնյակ	238700	240500	237000
Մալաթիա-Սեբաստիա	230600	235000	234700
Նուբարաշեն	148000	143500	142200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	269000	270300	269800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. հունվարի համեմատ, աճել են 0.2%-ով:

2010թ. փետրվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 307 բնակարաններ, որոնց քանակը 2010թ. հունվարի համեմատ աճել է 44.8%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 19.5%-ով:

2010թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2009թ.	փետրվար 2010թ.	հունվար 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	135400	142000	142000
	Ապարան	36600	44800	44800
	Թալին	46800	52100	51300
Արարատ	Արտաշատ	89800	92600	94500
	Մասիս	151000	125400	122800
	Վեդի	87100	91700	91700

	Արարատ	77600	88300	90000
Արմավիր	Վաղարշապատ	167700	155500	157000
	Արմավիր	111100	120200	121100
	Մեծամոր	79400	80400	81200
	Սևան	91900	92000	92800
Գեղարքունիք	Գավառ	50500	45200	44300
	Մարտունի	75200	83200	82600
	Վարդենիս	33500	32300	31900
	Ճամբարակ	17300	19000	18900
	Վանաձոր	93500	89400	91200
Լոռի	Ստեփանավան	51200	57100	57100
	Սպիտակ	64400	80300	78300
	Ալավերդի	34100	30500	30900
	Տաշիր	34200	35000	34900
	Թումանյան	5800	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13300	14100	14100
	Արմավիր	134700	160600	158700
Կոտայք	Նոր Հաճն	123300	124000	125800
	Բյուրեղավան	104500	103000	103400
	Եղվարդ	120300	117400	117400
	Հրազդան	67000	62700	62000
	Ծաղկաձոր	172500	181500	181500
	Չարենցավան	97500	77100	78200
	Գյումրի	113100	120300	118400
Շիրակ	Արթիկ	65800	58500	57400
	Մարալիկ	30700	30600	30600
	Գորիս	116700	137400	137400
Սյունիք	Կապան	97000	97800	99600
	Միսիան	88500	79500	80000
	Մեղրի	53100	57900	57900
	Ագարակ	31400	32800	32800
	Քաջարան	51900	61100	59700
	Դաստակերտ	7000	8000	8000
	Վայք	82200	71600	70000
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	104500	107800	107800
	Զերմուկ	125000	112600	110200
	Դիլիջան	89100	96400	94500
Տավուշ	Իջևան	150300	138700	137300
	Բերդ	39800	42000	42000
	Նոյեմբերյան	31200	33400	33400
	Այրում	21100	24000	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2010թ. հունվարի համեմատ աճել են 0.2 %-ով:

2010թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 371 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 74, մարզերում միասին վերցրած՝ 297: 2010թ. փետրվարին, 2010թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 24.1%-ով, ընդ որում Երևանում նվազել է 5.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ աճել 34.4%-ով: 2009թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի

գործարքների քանակն աճել է 22.0%-ով, ընդ որում Երևանում՝ 13.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 24.3%-ով:

2010թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2009թ.	փետրվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Կենտրոն	492000	485300	481100
Արաբկիր	400700	379400	376900
Քանաքեռ Զեյթուն	304900	288700	286700
Նորք Մարաշ	299100	284500	283200
Ավան	277200	238500	236400
Էրեբունի	283500	251700	249800
Շենգավիթ	276700	251500	249800
Դավթաշեն	310000	277500	273900
Աջափնյակ	275700	243800	240700
Մալաթիա-Մեքաստիա	272000	242300	239500
Նուբարաշեն	162800	147500	146400
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	305000	281000	278600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը,/ 2010թ. հունվարի համեմատ, աճել են 0.9%-ով:

2010թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2009թ.	փետրվար 2010թ.	դեկտեմբեր 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	143600	146300	144100
	Ապարան	38900	47400	47100
	Թալին	48900	54300	53400
Արարատ	Արտաշատ	103900	100100	97600
	Մասիս	153400	126400	124900
	Վեդի	90400	94800	94200
Արմավիր	Արարատ	79200	93300	91500
	Վաղարշապատ	174200	166100	165100
Արմավիր	Արմավիր	121100	124700	123200
	Սևան	103100	94900	94300
	Գավառ	56500	47700	46500

Գեղարքունիք	Մարտունի	78200	86500	85800
	Վարդենիս	37700	34500	34200
	Ճամբարակ	22300	21200	21100
Լոռի	Վանաձոր	105800	96900	96000
	Ստեփանավան	54600	61200	60900
	Սպիտակ	67500	81500	79500
	Ալավերդի	37100	35000	34800
	Տաշիր	38400	38300	38200
	Թումանյան	10400	10400	10400
	Շամլուղ	7400	7500	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Արուսյան	175400	165500	161600
	Նոր Հաճն	142500	134600	134100
	Բյուրեղավան	118700	109600	107600
	Եղվարդ	132200	128100	128100
	Հրազդան	78300	64500	64000
	Ծաղկաձոր	276000	305600	303100
	Չարենցավան	100400	80300	80100
Շիրակ	Գյումրի	124200	123400	121400
	Արթիկ	65800	60800	60700
	Մարալիկ	32700	31600	31600
Սյունիք	Գորիս	126400	143900	143500
	Կապան	109900	104400	103700
	Սիսիան	90400	84400	84400
	Մեղրի	53800	59900	59400
	Ագարակ	33400	35000	34700
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	87500	73800	73700
	Եղեգնաձոր	110800	114600	113500
	Ջերմուկ	103500	116300	114400
Տավուշ	Դիլիջան	115900	100900	98900
	Իջևան	153000	141800	139300
	Բերդ	42600	43900	43800
	Նոյեմբերյան	35500	35100	35100
	Այրում	23000	26000	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. հունվարի համեմատ, աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1234 միավոր /1486.70 հա/ հողեր, որից Երևանում` 66 միավոր /4.31 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 686 միավոր /1437.20 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.97 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 401 միավոր /35.98 հա/, որից Երևանում` 39 միավոր /1.80 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 125 միավոր /5.31 հա/, որից Երևանում` 18 միավոր /1.20 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 15 միավոր /3.97 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.35 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 7 միավոր /4.24 հա/:

2010թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 1101 միավորի /1429.71 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 54 միավոր /3.31 հա/, նվիրատվության գործարքներ՝ 112 միավորի /54.86 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /0.96 հա/ և փոխանակության գործարքներ՝ 21 միավորի /2.13 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2010թ. փետրվարին, 2009թ. փետրվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 41.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 57.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 24.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 50.0%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1080.64 հա, որից 1075.51 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.3%-ը կամ 246 գործարքներ /212.90 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 16 գործարքներ /0.78 հա/, իսկ 77.3%-ը կամ 851 միավորը /1216.79 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 37 միավոր /2.52 հա/:

2010թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 4 գործարք /0.03 հա/:

Ստորև ներկայացվում է 2010թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	9	0.18	7	0.60	4	0.41	4	0.35	23	1.27	6	0.49
Արագածոտն	1	0.98	0	0.00	0	0.00	6	0.26	44	21.83	0	0.00	24	2.70	0	0.00
Արարատ	4	1.41	3	3.17	1	0.03	4	0.07	65	32.46	1	0.01	74	8.02	4	0.15
Արմավիր	21	139.19	0	0.00	1	0.12	3	0.25	87	936.31	1	0.01	50	4.70	3	0.05
Գեղարքունիք	41	30.52	0	0.00	2	0.15	5	0.88	104	78.23	0	0.00	26	2.75	0	0.00
Լոռի	5	0.98	0	0.00	1	0.01	7	0.44	43	28.28	0	0.00	5	0.35	4	0.17
Կոտայք	11	20.96	1	0.09	24	2.14	22	0.69	83	33.46	0	0.00	58	4.83	9	0.19
Շիրակ	0	0.00	0	0.00	12	0.39	9	0.04	41	38.70	0	0.00	16	2.51	4	0.09
Սյունիք	9	2.57	5	0.35	1	0.15	7	0.33	13	7.25	0	0.00	8	0.81	4	0.42
Վայոց Ձոր	4	3.80	0	0.00	0	0.00	8	0.03	3	1.16	0	0.00	3	0.11	0	0.00
Տավուշ	1	0.31	0	0.00	8	0.37	1	0.005	19	5.20	0	0.00	11	0.70	2	0.02
Ընդամենը	97	200.72	9	3.61	59	3.54	79	3.60	506	1183.29	6	0.37	298	28.75	36	1.58

Ստորև ներկայացվում է 2010թ. փետրվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի								բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	16	0.78	0	0.00	9	0.18	7	0.60	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	1.24	1	0.98	0	0.00	0	0.00	6	0.26		
Արարատ	3	1.05	1	1.00	0	0.00	2	0.05	9	3.62	4	1.41	2	2.17	1	0.03	2	0.01		
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	25	139.56	21	139.19	0	0.00	1	0.12	3	0.25		
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	48	31.55	41	30.52	0	0.00	2	0.15	5	0.88		
Լոռի	5	0.15	0	0.00	1	0.01	4	0.14	8	1.28	5	0.98	0	0.00	0	0.00	3	0.30		
Կոտայք	5	0.39	0	0.00	0	0.00	5	0.39	53	23.49	11	20.96	1	0.09	24	2.14	17	0.30		
Շիրակ	4	0.06	0	0.00	2	0.05	2	0.01	17	0.37	0	0.00	0	0.00	10	0.34	7	0.03		
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	22	3.40	9	2.57	5	0.35	1	0.15	7	0.33		
Վայոց Ձոր	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	11	3.83	4	3.80	0	0.00	0	0.00	7	0.03		
Տավուշ	5	0.115	0	0.00	4	0.11	1	0.005	5	0.57	1	0.31	0	0.00	4	0.26	0	0.00		
Ընդամենը	39	2.55	1	1.00	16	0.35	22	1.20	205	208.91	97	200.72	8	2.61	43	3.19	57	2.39		

Հանրապետությունում 2010թ. փետրվարին, 2009թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.1 անգամ: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 2-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 2.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.8 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 30.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 2.0 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.7 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	0.98	74.5	74.5	74.5	35	11.45	365.0	12000.0	4335.3
Ապարան						1	0.55	86.5	2727.3	560.2
Թային						7	5.89	93.6	5494.5	510.0
Ծաղկահովիտ						1	3.95	79.5	1000.0	250.5
Արարատի մարզ										
Արտաշատ	2	0.68	127.3	133.0	130.2	25	12.73	335.1	10833.3	2190.5
Մասիս	2	0.73	122.8	187.5	155.2	9	6.61	200.0	11904.8	3037.5
Վեդի						30	12.16	207.0	10795.1	1825.5
Արմավիրի մարզ										

Արմավիր	4	2.85	105.9	175.0	145.8	44	30.04	294.3	9090.0	1220.8
Բաղրամյան	13	131.05	35.4	551.4	173.2	17	878.41	90.6	2561.1	687.6
Վաղարշապատ	4	5.29	33.0	521.6	155.5	26	27.86	444.4	11764.7	3078.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	41	30.52	143.0	464.4	268.6	67	30.92	199.8	1875.0	428.3
Ճամբարակ						13	8.40	60.5	953.3	264.5
Մարտունի						10	2.75	51.1	2850.0	600.0
Սևան						1	0.54	52.2	2134.8	245.3
Վարդենիս						12	34.21	41.2	2575.1	433.8
Լոռու մարզ										
Ալավերդի						20	13.01	170.4	6424.2	865.8
Գուգարք	5	0.98	152.7	377.1	330.8			234.6	6065.9	1100.0
Սպիտակ						1	0.23	250.0	5555.5	630.5
Ստեփանավան						4	4.89	90.6	1686.6	372.8
Տաշիր						18	10.15	45.3	1384.4	180.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	7.73	259.4	1845.8	677.5	37	10.53	279.3	11942.7	4678.4
Եղվարդ	6	12.23	150.0	740.8	313.3	28	14.45	174.4	11971.8	3463.9
Հրազդան	1	1.00	848.8	848.8	848.8	17	8.21	130.5	10256.4	1686.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	8.77	252.0	1693.1	518.8
Ամասիա						3	14.94	40.9	261.0	130.6
Անի						12	9.36	110.6	546.9	290.2
Աշոցք						4	3.73	58.5	215.8	115.8
Արթիկ						12	1.91	79.4	1428.6	260.5
Սյունիքի մարզ										
Գորիս	8	1.23	550.0	1200.0	712.5	1	2.53	92.6	1023.2	505.5
Կապան	1	1.34	241.5	241.5	241.5	3	0.90	120.0	841.6	295.8
Մեղրի						5	0.90	193.0	3000.0	612.5
Սիսիան						4	2.92	46.3	1977.4	310.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	3.80	34.4	67.5	51.0	3	1.16	125.0	10000.0	1571.5
Վայք								58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.31	929.5	929.5	929.5	11	2.24	213.3	3783.8	548.2
Իջևան						2	0.55	267.5	9454.5	1078.8
Նոյեմբերյան						6	2.41	46.7	7368.4	800.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										

Աշտարակ						22	21865.0	130.7	22200.0	2573.1
Ապարան						1	1250.0	124.1	609.6	262.4
Թալին								63.2	1454.8	140.0
Ծաղկահովիտ						1	3860.0	60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ						29	42682.0	173.9	7140.3	893.0
Մասիս	1	254.0	3038.4	3038.4	3038.4	26	19260.0	187.5	25000.0	1216.8
Վեդի						19	18287.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	25012.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	1	800.0	100.0	833.3	184.2
Վաղարշապատ						31	21234.0	197.4	26528.4	1533.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3650.0	186.6	1084.3	461.5
Ճամբարակ						2	1201.0	71.3	2286.2	140.0
Մարտունի	1	420.0	118.8	118.8	118.8	17	19910.0	119.3	5000.0	274.1
Սևան	1	1050.0	118.5	118.5	118.5	2	1100.0	240.0	3110.4	230.0
Վարդենիս						1	1660.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	1900.0	114.3	1388.9	206.0
Գուգարք						1	203.0	77.9	14083.3	765.0
Սպիտակ						1	1000.0	104.9	1348.3	199.2
Ստեփանավան						1	400.0	88.2	1666.7	147.3
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	12	11214.0	454.0	1510.0	916.5	29	22931.0	264.5	35353.5	2032.6
Եղվարդ	12	10179.0	419.1	3127.5	2436.1	27	23730.0	173.6	27000.0	2870.5
Հրազդան						2	1641.0	117.7	34848.5	1340.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	1801.0	317.3	3571.4	2265.4	3	4180.0	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	4	1600.0	407.1	407.5	407.4	3	2827.0	67.9	180.6	125.5
Աշոցք						1	2900.0	40.8	144.0	60.0
Արթիկ						9	15219.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	2796.0	112.2	1700.0	300.0
Կապան	1	1538.0	32.0	32.0	32.0			67.9	2638.9	238.5
Մեղրի						4	3200.0	68.5	632.9	150.5
Սիսիան						1	2150.0	123.5	875.0	164.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	600.0	96.7	7659.6	423.0
Վայք						1	460.0	120.7	1448.3	160.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	1	2602.0	1800.0	1800.0	1800.0	8	4527.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան						3	2465.0	125.0	1948.1	165.0

2010թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 13 գործարքներ 3.23 հա մակերեսով, ընդ որում 8-ը` /0.62 հա/ Լոռու, 5-ը` Շիրակի /2.61 հա/ մարզերում:

2010թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 910 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 80.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. փետրվարին, 2010թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 64.0%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ նվազել՝ 14.1%-ով:

2010թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 82 բնակարանների, 52 անհատական բնակելի տների, 368 հասարակական, 60 արտադրական նշանակության օբյեկտների, 326 միավոր /541.17 հա/ հողերի, 21 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 21 վարձակալության գործարքների /այդ թվում 4 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. հունվարի համեմատ աճել է 4.2 անգամ, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 75.0%-ով: 2010թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 541.17 հա հողերից 65.51 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 475.66 հա հողերի 68.12 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.58 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 180.64 հա, որից 129.03 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 72.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. փետրվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	29	6.23
Արարատ	0	0.00	4	2.56
Արմավիր	0	0.00	6	54.62
Գեղարքունիք	1	72.00	9	35.01
Լոռի	0	0.00	5	15.25
Կոտայք	0	0.00	1	4.00
Շիրակ	0	0.00	91	63.37
Սյունիք	0	0.00	25	129.03
Վայոց Ձոր	0	0.00	6	2.74
Տավուշ	0	0.00	10	18.05
Ընդամենը	1	72.00	186	330.86

2010թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1382 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2010թ. հունվարի համեմատ աճել է 95.5%-ով, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 46.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.0%/, առանձնատների /24.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /11.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում

անշարժ գույքի նկատմամբ իրականացված 655 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. հունվարի համեմատ, աճել է 2.7 անգամ, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 51.3%-ով:

2010թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 116.13 հա հողեր, որից 1.33 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 92.6%-ը կամ 107.56 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.12 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 38.38 հա, որից 37.25 հա գյուղատնտեսական:

2010թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 107 գործարքներ, որից 79-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 81.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15.0%-ն՝ անհատական բնակելի տների, 1.9%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների և 1.9%-ն՝ այգետնակների նկատմամբ: 2010թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.3 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.8 անգամ, իսկ մարզերում՝ 47.4%-ով: 2009թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.7 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.0 անգամ, մարզերում՝ 2.1 անգամ:

2010թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.03%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2010թ. հունվարի համեմատ աճել է 33.3%-ով. իսկ 2009թ. փետրվարի համեմատ նվազել՝ 20.0%-ով: 2010թ. փետրվարին մասնավորեցման 4 գործարք արձանագրվել է Գեղարքունիքի մարզում:

2010թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2020 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. հունվարի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2009թ. փետրվարի համեմատ՝ 36.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.8%/: